

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

27.09.2021թ.

ք.Մարտունի

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Քեղարքունիքի և Տավուշի մարզային բաժնի Մարտունի-Վարդենիս տարածաշրջանի բաժանմունքի հարկադիր կատարող արդարադատության լեյտենանտ Արթուր Միրզիկյանն ուսումնասիրելով թիվ 07463441 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից «31» մարտ 2021թ. տրված թիվ ԳԴ1/1960/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է Լեվոն Մանվելի Երանոսյանից, Քևորգ Ամբասի Ստամբուլցյանից, Վաղինակ Դերենիկի Ոսկանյանից և Արաքսյա Հրաչիկի Համբարձումյանից համապարտությամբ «Ֆինքա ՈՒՎԿ» ՓԲԸ-ի օգտին բռնագանձել 9816,40 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, 97586 ՀՀ դրամ որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար և հաշվարկվող տոկոսագումարները՝ սկսած 15.07.2019 թ. մինչև պարտավորության փաստացի կատարումը: Բռնագանձումը տարածել 20.07.2017 թ. կնքված թիվ 282264 անշարժ գույքի հաջորդող գրավի պայմանագրի պայմանագրով գրավադրված գույքի վրա:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 66 և 67 հոդվածների համաձայն պարտապանից հօգուտ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության պետք է բռնագանձել բռնագանձված գումարի 5 տոկոսի չափով գումար, որպես կատարողական գործողությունների կատարման ծախսեր:

23.09.2021 թվականին Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Քեղարքունիքի և Տավուշի մարզային բաժնի Մարտունի-Վարդենիս տարածաշրջանի բաժանմունք մուտք է եղել պահանջատիրոջ գրությունը, որի համաձայն թիվ ԳԴ1/1960/02/19 կատարողական թերթով պարտքի մնացորդը կազմում է 7.062.907 ՀՀ դրամ:

10.03.2021թվականին Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Քեղարքունիքի մարզային բաժնի Մարտունի-Վարդենիս բաժանմունք մուտք է եղել Պ-1472-05/01 փորձագիտական եզրակացությունը, ըստ որի Քեղարքունիքի մարզ գյուղ Սոթք 1-ին փողոց 3-րդ նրբանցք թիվ 13 հասցեի բնակելի տան շուկայական արժեքը գնահատվել է 2.100.000 ՀՀ դրամ:

Կատարողական վարույթի շրջանակներում կատարված գործողությունների ընթացքում պարտապան Արաքսյա Հրաչիկի Համբարձումյանի գույքի և դրամական միջոցների նկատմամբ հայտարարված հետախուզման արդյունքում պարտապանի անվամբ բռնագանձման ենթակա այլ գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1-րդ և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել 06.04.2021թ հարուցված թիվ 07463441 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով.

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Հարկադիր կատարողի որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ ՀՀ Վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Հարկադիր կատարող
Արդարադատության լեյտենանտ՝



Ա.Միրզիկյան